Ես գիտեմ, որ իրենք ուզել են այս կիրակի Տաթեւում անել պատարագ, անգամ քոլեջի դասախոսներն են հայտարարել, որ կիրակի Տաթեւ են գնալու, էն էլ մուրազները փորները մնաց: Իրենք պատարագին մասնակցելու նախապայման ունեն, ասում են՝ կաթողիկոսին պիտի չհիշեք: Դե, նախապայմանը դնում են, նաեւ դրա համար վճարում են:

Կարդացեք՝ էջ 4

Սահմանի բացումն իրականում ոչինչ էլ չի տալու Հայաստանին եւ հայ հասարակությանը, բայց Փաշինյանի իշխանության համար դա չափազանց կարեւոր քարոզչական քայլ կլինի, կարող են ասել, թե՝ տեսեք, 1993 թվականից հետո Թուրքիան սահմանը փակել էր, այս տարիների ընթացքում տարբեր իշխանություններ փորձել են՝ չի ստացվել:

Կարդացեք՝ էջ 5

ՔՊ-ի պարագլուխը, խելահեղ մտասեւեռումով, մեր Հայրենիքը տանում է դեպի աղետ: Եթե 26-ին ձայներ կորզելու մտադրությամբ Սուրբ Էջմիածնի վրա հարձակումը էլեկտորատի մի փոքր (ագրեսիվ) հատվածում կարճաժամկետ եւ խիստ կասկածելի ոգեւորություն ծնի, ապա երկարաժամկետ հեռանկարում կդառնա քաղաքական պայթյունի պատճառ:

Կարդացեք՝ էջ 6

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 187 (4089), 21 նոյեմբեր, ուրբաթ, 2025

Հրապարակ

www.hraparak.am

Դեռ շաբաթներ առաջ պետական բոլոր գերատեսչությունների աշխատակազմերին ասվել է, որ նոյեմբերի 22-ին բոլոր գերատեսչությունների քաղծառայողները մեկ մարդու պես պետք է ներկա գտնվեն Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում՝ վարչապետի մասնակցությամբ ինչ-որ միջոցառում է տեղի ունենալու: Հատուկ զգուշացրել են՝ բացակաները չեն ներվելու, կարող են բացակայել միայն մահացածները: Թե ինչ հույժ կարեւոր միջոցառում է, հստակ պարզաբանում չեն տվել, ասել են միայն, որ վարչապետի հետ հարցուպատասխանի, քննարկման հնարավորություն կլինի, ուստի բոլորը մեկ մարդու պես, 13.00-ին լինեն Համալիրում: Իսկ միջոցառումը մի քանի ժամ է տեւելու: Քաղծառայողները ենթադրում են, որ այդ հավաքը նախընտրական չհայտարարված քարոզչության շրջանակներում է կազմակերպվում, եւ Փաշինյանը նպատակ ունի տետ ա տետ լվանալ քաղծառայողների գլուխները, ինչպես փորձում է անել, ասենք, ուսանողների կամ հանրության այլ շերտերի հետ՝ իր պարբերական հանդիպումներով եւ ելույթներով: Ի դեպ, «Կրթվելը նորաձեւ է» շարժման հավաքներից Փաշինյան ամուսիններն արդեն իսկ հրաժարվել են եւ նոր ձեւեր են փնտրում, որոնց Աննա Հակոբյանն այլեւս մասնակցություն չի ցուցաբերում:

Իշխանությունները հատկապես վերջին շրջանում հաճախ են գլուխ գովում, թե զենք են գնում, սահմաններն են կահավորում. նախկին «կանսերվի բանկաներով» սահմանը պաշտպանելու փոխարեն բետոնե բունկերներ կամ, ինչպես ԱԺ պաշտպանության հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանն է սիրում ասել, սահմանային ամրոցներ են կառուցում: Պաշտպանության նախարարության մեր աղբյուրները հայտնում են, որ այդ «ամրոցների» կառուցման համար բաց մրցույթ է հայտարարվում, որում նկարագրվում է, թե ինչ պարամետրերով շինություն կառուցելու մասին է խոսքը, այսինքն՝ անվտանգային գաղտնի ինֆորմացիան հասանելի են դարձնում նաեւ մեր թշնամիներին: Սա միակ տարօրինակ փաստը չէ այս գործընթացում: Մեր աղբյուրն ասում է նաեւ, որ «ամրոցների» շինաշխատանքները հիմնականում այլազգիներն են իրականացնում՝ հնդիկներ, Եգիպտոսի քաղաքացիներ, իրանցիներ, եւ բնական է, որ բոլորի ինքնությունն ԱԱԾ-ն չի ստուգում, ու չկա երաշխիք, որ, դիցուք, դրանցից ոմանք այլ երկրի հատուկ ծառայությունների աշխատակիցներ կամ ինֆորմատորներ չեն, որոնք էժան աշխատուժի անվան տակ գաղտնի ինֆորմացիաներ են փոխանցում մեր հակառակորդներին:

Տեսողության խնդիր

Մի նիկոլական քարոզիչ ուշագրավ հրապարակում էր արել, թե ինչու է պաշտպանում այս իշխանություններին: Ուշադրությամբ կարդացի, քանի որ կետերով գրել էր, թե ինչն է իրեն «ուրախացնում» այսօր: Պարզվեց՝ ուրախացնում է այն, որ «փոքրիկ գյուղում վերջապես դպրոց են կառուցել», եւ «մանկապարտեզի դռներ են բացվել»: Բայց նախկինների ժամանակ էլ էին կառուցում՝ եւ ոչ միայն դպրոցներ, այլեւ թունելներ, էստակադաներ, առեւտրի կենտրոններ, բնակելիներ, շրջանցող ճանապարհներ, Հյուսիսային պողոտա, ուղղակի նախկին իշխանությունները չէին կարողանում դա կապիտալի վերածել՝ դրանց ֆոնին փիառվել, ներկայացնել հանրությանը: Պարզվեց՝ ուրախանում է, որ «գյուղում աճում է կրթված սերունդ», «զինվորն այլեւս սոված չէ, համազգեստ ունի...»: Հայաստանի գյուղերում ու քաղաքներում առաջ էլ էր կրթված սերունդ մեծանում, զինվորն էլ գուցե շատ կուշտ չէր, բայց ողջ-առողջ էր, եւ 5 հազար ջահել-ջիվան զինվորի մարմին հողին չէինք հանձնել: Հաջորդ «ուրախությունը», անշուշտ, ասֆալտն է եւ փողոցների լուսավորությունը: Չգիտեմ՝ մարդը երեւի փոքր է եղել, չի տեսել, որ մի քանի փողոց ասֆալտելու փոխարեն, ժամանակին Սեւան-Դիլիջան թունել են կառուցել, Սարի թաղի եւ Մոնումենտի ճանապարհները: Ասում է՝ «պատմամշակութային վայրերն այլեւս անտեր չեն՝ պահպանվում են, հարգվում են»: Չգիտեմ, թե որ վայրերի մասին է խոսքը: Գուցե Ամարասի, Գանձասարի, Դադիվանքի՞ մասին, որոնք արդեն «տեր» ունեն, եւ այդ տերը հայը չէ: Իհարկե, եթե մարդն ուզում է ամենավատ վիճակում էլ մի լավ բան «տեսնել», ոչ ոք չի կարող նրան խանգարել: Ինչպես չի կարող խանգարել, երբ նա մեր ակնհայտ եւ ահռելի կորուստները, ձախողումները, այս ամբողջ աղետը չի տեսնում, որովհետեւ ուզում է ամեն գնով արդարացրած լինել իշխանություններին:

Մեր տեղեկություններով, մարզպետներին հրահանգ է իջեցվել՝ հավաքագրել իրենց մարզերի բնակիչների բոլոր խնդիրները՝ սոցիալականից մինչեւ առողջապահական, եւ լուծել դրանք: Այդ նպատակով մարզպետարաններին գումարներ են տրամադրվել, ասել են՝ հաջորդ տարի հատկացվելիք գումարն ավելի մեծ կլինի, քանի որ «ծրագրային վարկեր» են նախատեսված: Ըստ ամենայնի, այդ վարկերը կծախսեն ոչ թե նպատակային՝ ըստ ծրագրերի, այլ ԱԺ ընտրությունների նախաշեմին յուրօրինակ ընտրակաշառքի տեսքով: Մարզպետներից մեկն անկեղծացավ, որ անգամ մարդկանց հավաքների, տանիքների խնդիրներ են լուծում: Սակայն խոցելի խմբերից առավել իշխանությունը կարեւորում է համայնքում «ավտարիտետների» խնդիրները. ասվել է, որ նրանց պետք է մոբիլիզացնել, ընդառաջել իրենց հարցերով, որպեսզի ընտրություններին կարողանան հույս դնել նրանց վրա:

ԱՅԴ ՀԱՐՑԻՆ ԿՊԱՏԱՍԽԱՆԵՄ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՑ ՀԵՏՈ

Ինֆորմացիա է տարածվում, որ «Հայաստան» դաշինքի նախկին, այժմ անկախ պատգամավոր, զոհվածի հայր Գեղամ Նազարյանը եւս ընդգրկվելու է «Քաղպայմանագրի» նախընտրական ցուցակում: Նազարյանը պատերազմից հետո, հիշեցնենք, շատ կոշտ քննադատում էր Նիկոլ Փաշինյանին, նրան մեղադրում իր որդուն սպանելու մեջ, իսկ վերջին տարիներին խիստ մեղմացրել է իր հռետորաբանությունը եւ տեւական ժամանակ է՝ Փաշինյանին ու իշխանությունների տարբեր քայլեր արդարացնող հայտարարություններ է անում: Գեղամ Նազարյանին հարցրինք՝ առաջադրվելու է ՔՊ ցուցակով: Պատգամավորն ասաց, որ չի ուզում կատեգորիկ խոսել այս հարցի շուրջ. «Այդ լուրերը նոր չեն, ոչ մեկնաբանում եմ, ոչ չեմ մեկնաբանում... ոչ հերքում եմ, ոչ հաստատում... չգիտեմ՝ ովքեր են նման լուրեր տարածում, դատարկություն է»: Այսինքն, անհավանական է համարում իր առաջադրումը: «Ո՛չ հավանական եմ համարում, ոչ՝ անհավանական, այդքան բան»: Կրկնեցինք հարցը: «Ես այդ լուրերին չեմ պատասխանում, կպատասխանեմ դեկտեմբերի 3-ից հետո»: Հիշեցնենք, որ ՔՊ թեկնածուների առաջադրումներն ավարտվում են նոյեմբերի 30-ին, որից հետո ՔՊ վարչությունը պետք է թեկնածուներին գրանցի: Հարցրինք՝ կարո՞ղ ենք եզրակացնել, որ առաջադրվել եք, պարզապես հիմա ձեռնպահ եք մնում խոսելուց՝ մտավախություն ունենալով, որ չեն գրանցի: «Հարցազրո՞ւյց եք վերցնում... չէ, չեմ պատասխանի, այս թեմայով հարցազրույց, մեկնաբանություն չեմ տալիս, եթե դեկտեմբերի 3-ին հարց ունենաք, կպատասխանեմ»:

ՀԱԿ-Ը ԼԻՆԵՐ՝ ԵՐԵՍՆԵՐԻՆ ԿՇՊՐՏԵՐ. ԴՈՒՔ ԳՈՐԾ ՁԱԿՈՂ ԵՔ, ՈՉ ԹԵ ԳՈՐԾ ԲԱՑԱՀԱՅՏՈՂ

ՀԱԿ

1999-ի հոկտեմբերի 27-ն ու 2008-ի մարտի 1-ը Նիկոլ Փաշինյանի իշխանության փրկօղակներն են՝ «հենասյուները», որոնք ամեն անգամ ընտրություններից առաջ խաղարկում են իշխանությունները, խաղում մարդկանց, հատկապես տուժողների եւ նրանց ընտանիքների հույզերի ու զգացմունքների հետ: Եվ հանրությանը ներշնչում, որ դրանք բացահայտված չեն, որ դրանց մեղավորները պատժված չեն, որպեսզի մարդիկ չբարձրացնեն այս իշխանության օրոք տեղի ունեցած աղետների եւ դրանց պատասխանատվության հարցը:

Մարդ, որն Արցախ է հանձնել, որի գործողությունների արդյունքում 5 հազար եւ ավելի մարդ է զոհվել, որը խաղաղ ցուցարարների վրա մարտական նռնակ նետելու հրաման է արձակել, արդյո՞ք ունի բարոյական իրավունք՝ բարձրացնելու նախկին դեպքերի նորից ու նորից քննության պահանջը եւ իրավապահ մարմիններից նոր բացահայտումներ պահանջելու: Իսկ հասարակությունը ՀՀ իրավապահներից ակնկալում է, որ նրանք անդրադառնան Նիկոլ Փաշինյանի գործողություններին եւ անգործությանը, պարզեն, թե որտեղ է նրա ուղղակի մեղքը, եւ պատասխանատվության ենթարկեն նրան՝ օրենքները խախտելու, հանցավոր անփութություն եւ պաշտոնի չարաշահումներ թույլ տալու, բյուջեն անարդյունավետ վատնելու եւ այլնի համար:

Օրերս իշխանությունը որոշել էր կրկին թարմացնել Մարտի 1-ի հիշողությունները, եւ Ազգային ժողովում այդ գործով լսումներ էին կազմակերպել, որտեղ անգամ մի 17-ամյա պատանի բոցաշունչ ելույթ ունեցավ, որն այդ դեպքերի ժամանակ երեւի ընդամենը չոչ էր անում: Ըստ որոշ տեղեկությունների՝ լսումները կազմակերպվել են Անդրանիկ Քոչարյանի նախաձեռնությամբ: Ուշագրավ է, որ 2008-ի հայտնի պայքարի ակունքներում կանգնած եւ Մարտի 1-ի ակտիվ մասնակից Հայ ազգային կոնգրեսից գեթ մեկ ներկայացուցիչ չէր մասնակցում այս լսումներին: Մասնակցում էին իշխանական քարոզիչները՝, իշխանության ներկայացուցիչների հետ: Թեմայի շուրջ «Հրապարակը» զրուցել է ՀԱԿ փոխնախագահ **Արամ Մանուկյանի** հետ:

- Գաղտնիք չէ, որ Մարտի 1-ի արյունոտ դեպքերից ամենաշատը տուժել են ՀԱԿ-ականները, եւ, ի վերջո, այդ պայքարի ակունքներում ՀԱԿ-ն էր կանգնած, այլ ոչ թե Նիկոլ Փաշինյանն ու իր ուսապարկերը: Ինչո՞ւ ՀԱԿ-ից որեւէ ներկայացուցիչ ներկա չէր Ազգային ժողովի լսումներին:

- Առնվազն տարօրինակ է եւ անտրամաբանական այս ամենը, քանի որ Մարտի 1-ի գործի բացման առումով ամենահետեւողական քաղաքական ուժը եղել է Հայ ազգային կոնգրեսը, ամենաշատ տուժածը եղել է Հայ ազգային կոնգրեսը, եւ մեր ակտիվիստներն են հարյուրներով հայտնվել բանտերում եւ հազարներով ստացել տարբեր մարմնական վնասվածքներ ու տուժել տարբեր առումներով: Բացի այն, որ Մարտի 1-ի գործի բացահայտման ամենաշահառու կողմը եւ հետեւողական ուժը եղել է ՀԱԿ-ը, նաեւ հրավիրված չէր: Բացատրությունը հետեւյալն է՝ այս մարդիկ խնդիր չեն դրել Մարտի 1-ի գործը բացահայտելու եւ հետեւողականորեն մեղավորներին պատժելու, այլ ակնհայտ երեւում է, որ այս ամենը քաղաքական կոնտեքստ ունի, 8 տարի լինելով իշխանության՝ Փաշինյանն ու իր թիմը բացարձակապես ոչինչ չեն արել Մարտի 1-ը բացահայտելու գործում, դեռ մի բան էլ ավելին՝ այդ իրենք են գործը կոծկել, Սահմանադրական դատարանի որոշումով արդարացվել են այդ ամենի իրական կազմակերպիչները: Այժմ այն, ինչ տեղի է ունենում, նախընտրական քարոզարշավի տրամաբանության մեջ է՝ ընդդիմադիրների դեմ պայքարելու նպատակով: Նրանք այս լսումներով ամբողջապես այլ խնդիրներ են լուծում եւ չունեն նպատակ՝ Մարտի 1-ի հանցագործներին պատժելու: Մի քանի փաստով կարող եմ ներկայացնել: Այս իշխանության օրոք դադարեցվեց քաղբանտարկյալների արդարացման գործընթացը, այսօր մենք ունենք մոտ 50 նախկին քաղաքական բանտարկյալ, ովքեր մինչ այս պահը համարվում են հանցագործներ: Դատախազությունն անգամ չի էլ կաշկանդվել՝ անել հայտարարություն եւ նշել է, որ նպատակահարմար չեն գտնում արդարացման գործընթացները շարունակելու: Կարող եմ ասել, որ վերջին արդարացումները եղել են դատախազ Արթուր Դավթյանի օրոք, որի ժամանակ մոտավորապես 40 անձ արդարացվել է, 10 անձ էլ՝ ՄԻԵԴ-ի որոշմամբ: Նախաձեռնողները ՀԱԿ-ն ու իրավապաշտպան կազմակերպություններն էին: Դեմոկրատական այդ փուլում դատախազի կամքով արդարացումներ եղան, ինչից հետո Անանա Վարդապետյանի ժամանակ այդ գործընթացները կանգնեցին: Այս իշխանությունը, փոխանակ բացահայտումների գործընթացը շարունակի, գործընթացը դադարեցնելու ճանապարհով է գնում: Ունենալով քաղաքական լծակներ, այսօր ոչինչ չի արվում՝ Մարտի 1-ի գործը բացահայտելու համար: Մուրճն իրենց ձեռքին, փոխանակ գործ անեն, հանրային քննարկում են կազմակերպում չեղած բաների վերաբերյալ: Ակնհայտ է, որ այստեղ չի աշխատում իրավագիտությունը, այստեղ աշխատում է քաղաքականությունը՝ ընտրություններից մի քանի ամիս առաջ: Եթե աշխատող լինեին, Ազգային ժողովում կխոսեին, թե ինչ աշխատանքներ են տարվել, ոչ մի խոսք գործողությունների մասին չասվեց, ինչը եւս մեկ անգամ հաստատեց մի բան, որ ՀԱԿ-ն այնտեղ անելիք չուներ: ՀԱԿ-ը նրանց երեսին կարող էր շպրտել այն փաստը, որ իրենք գործ փակող են, ոչ թե գործ բացահայտող:

- Այսինքն՝ իշխանության ձեռքին Մարտի 1-ը մահակ է:

- Այո, որպես մահակ, փորձում են այն օգտագործել՝ ընտրություններից առաջ: Վախեցնում են, որ գործը կբացահայտեն, բայց չեն բացահայտի, ասում են՝ խելոք մնացեք, դրանով նախկին իշխանություններին ընդդիմադիր լինելու հնարավորություն են տալիս, ինչպես արեցին 2021 թվականին:

- Ձեր կարծիքով՝ հանրության մոտ Փաշինյանի այդ մահակն աշխատո՞ւմ է:

- Որոշակի առումով՝ այո, քարոզչամիջոցներն անում են իրենց գործը, երբ 100 լրատվամիջոցից 90-ն այդ մասին է խոսում, ապա, այո, ազդեցություն թողնում է: Հանրությանը մի քանի ընդդիմադիր լրատվամիջոց կարող է ճշմարտությունն ասել, սակայն իշխանական լրատվամիջոցների ազդեցությունը հասարակության վրա ավելի մեծ է, քան չեզոք եւ ընդդիմադիր լրատվամիջոցների ազդեցությունը:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱԱԾ-Ն ՍԻՐԱՅԻՆ ԿԱՊԸ ՀԱՄԱՐՈՒՄ Է ԼՐՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՅՑ



Ադրբեջանի օգտին լրտեսության եւ պետական դավաճանության համար մեղադրվող ԱԳՆ հյուպատոսական բաժնի աշխատակից, դիվանագետ Աշխեն Ալեքսանյանը շարունակում է մնալ կալանքի տակ: Նրա փաստաբանները վերաքննիչ բողոք էին ներկայացրել կալանքի որոշման դեմ, որը, սակայն, չի բավարարվել:

Հիշեցնենք, որ երիտասարդ կնոջը ձերբակալել էին հունիսի 20-ին, օդանավակայանում, Վիեննա մեկնելիս: Մեր տեղեկություններով, նա արդեն հյուպատոս էր նշանակվել, սակայն օդանավակայանում կալանքից հետո հրամանն անմիջապես չեղարկել են եւ նրա մասին ողջ տեղեկատվությունը համացանցից ոչնչացրել: Սակայն «Հրապարակի» աղբյուրները հենց ձերբակալման օրն էին մեզ տեղեկատվություն տրամադրել, չնայած այն բավականին ուշ հրապարակեցինք, քանի որ իրավասու մարմինները, այդ թվում՝ ԱԳՆ-ն, հերքում էին այդ փաստը: Իսկ ԱԳՆ աշխատակցի մոտ հայտնաբերվել էին ինչ-որ կարեւոր փաստաթղթեր, որոնք նա պատրաստվում էր տրամադրել Ադրբեջանի քաղաքացիություն ունեցող անձի: Միայն երկու ամիս անց՝ օգոստոսի 29-ին, սկանդալը հասավ մամուլ, նախ՝ «Հրապարակ» թերթը գրեց, որ նման սկանդալային կալանավորում է եղել, որից հետո խուզարկություն է իրականացվել ԱԳՆ-ում, եւ անգամ համակարգիչներ են առգրավվել կամ համակարգիչների պարունակություն, ապա սկսեցին գրել նաեւ մյուս ԶԼՄ-ները: Երիտասարդ կնոջ ֆոտոները հայտնվեցին համացանցում: Իսկ Քննչական կոմիտեն սուղ պաշտոնական տվյալներ հաղորդեց: Թե ինչ է արել Աշխեն Ալեքսանյանը, ինչում է արտահայտվում դավաճանություն ասվածը՝ մինչ օրս չի պարզաբանվել անգամ նրա պաշտպանների կողմից:

Գործով նախաքննությունը տեւել է ընդամենը 2 ամիս, ու նյութերն արագ ուղարկվել են դատարան, կարծես քննչականը շտապում էր հերթական «գալոչկան» դնել լրտեսների որսի պլանում: Ենթադրաբար, Քննչական կոմիտեից արտահոսքեր գնացին դեպի մամուլ, անգամ լրտեսի անունը հնչեց, որ, ըստ մեղադրանքի, Ալեքսանյանն Ադրբեջանի հատուկ ծառայությունների ներկայացուցիչ Շոթա Իվանիշվիլի տվյալներով հանդես եկող անձին տվյալներ է փոխանցել՝ 34 հազար եվրո գումարի դիմաց:

Դիվանագետի փաստաբանները խուսափում են խոսել դատարանում սկսված քննությունից: «Այս պահին կարող եմ մի բան ասել միայն, քանի որ նիստերը փակ են, իմ պաշտպանյալը մեղքը չի ընդունում: Արարքի մեջ առկա չէ այնպիսի գործողություն, որն իր մեջ պարունակի հանցակազմ»,- ասում է փաստաբան **Տավրոս Գեւորգյանը**: Նախկին պաշտոնյայի մյուս պաշտպանը՝ **Աբգար Պողոսյանն** ասում է, որ երկրում չէ, թեեւ ավելի վաղ խոստացել էր հայտարարություն անել այս գործով: Նա ասել էր՝ չկա Աշխեն Ալեքսանյանի դեմ օրինական որեւէ ապացույց, նա իրականում տուժող է, քանի որ կոպտորեն խախտվել են նրա իրավունքները:

Եվ իրոք, սկանդալի առաջին իսկ օրվանից երիտասարդ կնոջ անմեղության կանխավարկածը կոպտորեն խախտվեց: ԶԼՄ-ները գրեցին, որ կինը սիրային կապ է ունեցել ադրբեջանցու հետ, նրան տվյալներ է փոխանցել: Սիրային կապի վերաբերյալ տեղեկությունը ԱԳՆ նախկին աշխատակցի փաստաբանները ոչ հերքում են, ոչ հաստատում: Մնում է ենթադրել, որ մեր ԱԱԾ-ի համար սիրային կապը շարունակում է մարդկանց լրտեսության մեջ մեղադրելու միակ միջոցը լինել: Պատերազմից անմիջապես հետո տարբեր զինվորականների էին մեղադրում «Օդնիկլասսնիկի»-ով եւ այլ սոցցանցերով լրտես աղջիկների հետ սիրային կապեր հաստատելու ու նրանց գաղտնի տեղեկություն փոխանցելու մեջ, հիմա էլ անցել են կանանց:

Ի դեպ, Աշխեն Ալեքսանյանն ամուսնացած չէ: Բայց հանրությունն ուզում է գոնե մեկ իրական լրտեսի տեսնել, որին փողի դիմաց «վերբովկա» են արել, որը մի նորմալ «գաղտնի» տվյալ փոխանցած լինի, ոչ թե իր ֆոտոն՝ զորամասի տրաքած տեխնիկայի ֆոնին կամ որեւէ բարեմասնություն՝ ռուս աղջիկ գայթակղելու համար, կամ ինչ-որ առեղծվածային փաստաթղթեր, որոնք մարդը առանց վախենալու, բացահայտ իր հետ տանում է արտերկիր: Մենք էլ նայենք-ասենք՝ ինչ լավ է աշխատում մեր ԱԱԾ-ն: Բայց չկա ու չկա նման բացահայտում: Միայն ռոմանտիկ պատմություններ են, որոնք որոշ դեպքերում քիչ է մնում վերածվեն ամուսնության:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԽՈՍՈՒՅԹ

«ԱԽՈՒՐՅԱՆՑԻ ԱՆՈՆԵՐՆ» ԱՆԳԱՄ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՆ ՈՒՏԵԼ ՆԱԽԿԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՒՏԸ

Հասարակությանը սեւերի ու սպիտակների բաժանած ու դրանով ներքին թշնամանք հրահրող՝ պետության ղեկավարի աթոռը զբաղեցնող Նիկոլ Փաշինյանն իր իշխանության ութերորդ տարում հասկացել է, որ ժողովուրդը զզվել է այդ դիսկուրսից՝ նախկին-ներկա պառակտումից: Արցախը հանձնած, հինգ հազար զոհերի պատասխանատվությունն ուսերին կրող Փաշինյանն իր ամենամեծ մեղքը հենց դա է համարում: Երեկ, կառավարության նիստից հետո նա, պատասխանելով լրագրողների հարցերին, խոստովանել է իր մեղքը, ասել, որ մեղքերի թողություն է խնդրում. «Հիմա դուք կասեք, որ ես էլ եմ նույնն արել… Այո՛, դրա համար հիմա ես կիրակի օրերը գնում եմ ու խորանի առաջ ծնկի եմ գալիս, մեղքերի համար թողություն եմ խնդրում»: Բայց հընթացս բաց չի թողել նախկիններին խայթելու առիթը եւ ցույց է տվել, որ զղջման խոսքերն ընդամենը խոսքեր են, որոնցից ոչ մի գործողություն չի բխում: Ասել է, որ նախորդած շրջանի քաղաքական էլիտայի բոլոր ներկայացուցիչները, որոնք ՀՀ-ն առաջնորդել են, տարել են դեպի թակարդ ու պահել թակարդում, 2026 թ. ԱԺ ընտրությունների արդյունքում պետք է դուրս մղվեն ու այլեւս քաղաքական դաշտում տեղ չունենան. «Մարդկանց հետ շփվում եմ, մարդիկ արդեն զզվել են նախկին-ներկա բանավեճերից, էլ չեմ ասում, որ այդ բանավեճերը շատ հաճախ դուրս են գալիս քաղաքական բարեկրթության տրամաբանությունից»: Տեղեկացրել է նաեւ, թե այս թեմայով իրենց կուսակցության ֆորմատով էլ են քննարկում ունեցել ու եկել են այն եզրակացության, որ պետք է քաղաքական կյանքի նորմալ կանոններ հաստատվեն ՀՀ-ում, որտեղ հայհոյախոսությունն ընդհանրապես տեղ չպետք է ունենա: Եվս մի 8 տարի անց էլ երեւի կհասկանա, որ չի կարելի սահմանափակել ազատ խոսքը, վիրավորել ու քիթը խոթել հոգեւորականների կյանքի մեջ, որ մարդու հեռախոսի պարունակությունը կարդալ չի կարելի, եւ սրբազաններին ու գործարարներին իր հրահանգով կալանավորելն էլ վատ բան է:

«Երեւի թե առաջին անգամն է, որ պետք է համաձայնեմ Նիկոլ Փաշինյանի հետ, որ ժողովուրդը ոչ միայն հոգնել է, այլեւ զզվում է այս թշնամանքից: Այո, հավատացնում եմ՝ հասարակությունը հոգնել է, զզվել բոլոր այն գործիչներից, որոնց հանրային խոսույթում կան հայհոյանք, անեծք, թշնամանք, ատելության քարոզ, հավատացնում եմ ձեզ՝ այլեւս լսելի չեն, դա միանշանակ է»,- ասում է քաղաքական գործիչ **Նաիրա Զոհրաբյանը**: Միեւնույն ժամանակ նա արձանագրում է, որ հենց Փաշինյանն է հասարակությանը նստեցրել ատելության, անեծքի, թշնամանքի թմրասեղի վրա. «Հենց իրենք՝ 2018 թվականի դագաղների իշխանազավթմամբ: Այս ռեժիմի կարգախոսն է՝ «ատիր քո մերձավորին», եւ այս ռեժիմն իր իշխանությունը պահում է՝ հասարակությանը նստեցրած ատելության նարկոտիկի ասեղի վրա, բայց, այո, ես ավելի քան վստահ եմ, որ բոլոր այն քաղաքական ուժերը, որոնք փորձելու են իրենց կարծիքով քվե շահել հայհոյանքով, անեծքով, «նախկինները, թալանը, թալանը» տավտոլոգիայով, ակնհայտորեն դատապարտված են լինելու»:

Զոհրաբյանը չի կարծում, թե Փաշինյանն անձամբ եւ անկեղծորեն դատապարտում է հայհոյանքն ու թշնամանքը. «Պարզապես իրենք էլ են հասկացել, որ նախկին-ներկա բանավեճը, թե՝ նախկինները թալանել են, նախկինները հանձնել են… այս այլանդակությունն այլեւս իր սպառողը չունի: Նույնիսկ «ախուրյանցի անո» սեգմենտն այլեւս հրաժարվում է սպառել հայհոյախառն քաղաքական օրակարգը, հրաժարվում է ուտել նախկինների մասին կուտը: Ես ավելի քան վստահ եմ՝ գուցե սոցիոլոգիական հարցումներ ունեն եւ հասկանում են, որ իրենց մարտավարությունը մերժելի է, հիմա որոշել են արձանագրել հայտնի ճշմարտություններ: Իսկ, այո, ճշմարտությունն այն է, որ ես՝ ինքս, շատ պարզ մոնիթորինգ եմ անում, նայում եմ այն լուրերի դիտումները, որտեղ կան հայհոյանք, նեգատիվ, այդտեղ նկատելիորեն պակաս են այդ կարգի լուրերի, այդ լեքսիկոնն օգտագործող գործիչների դիտումները, քան այն գործիչների, որոնց խոսույթում անեծք, հայհոյանք չկա: Սա շատ տեսանելի է, որովհետեւ հասարակությունը հոգնել է տոքսիկ միջավայրից, տոքսիկ գործիչներից, տոքսիկ քաղաքական ուժերից: Ես հասկանում եմ՝ շատ դժվար է զսպել գայթակղությունը եւ չպատասխանել, երբ որ մի փնթի կենդանի քեզ ու երեխայիդ ամենապաթոլոգիկ հայհոյանքներն է տալիս, բայց ես վերջին շրջանում հաճախ եմ ասում, որ ամեն օր ինքս ինձ վրա աշխատում եմ, որ ինձ, իմ երեխային, ընտանիքին սեռապաթոլոգիկ հայհոյանք տվող վիժվածքին չպատասխանեմ, որովհետեւ այդ դեպքում ես ինչո՞վ եմ տարբերվելու իրենից»: Իշխանության կարգախոսը՝ «Ատիր քո մերձավորին», այլեւս չի սպառվում, Փաշինյանը, ըստ Զոհրաբյանի, հասկացել է, որ այլեւս չի կարող մայոնեզով եւ կետչուպով այդ ամենն ուտեցնել «ախուրյանցի անո» սեգմենտին, ուստիեւ ասում է շատ հայտնի ճշմարտություններ:

Ի դեպ, վաշինգտոնյան հռչակագրի ստորագրումից հետո իշխանությունը մոտ երկու ամիս հրաժարվել էր նախկին-ներկա կարգախոսից, փոխարենը ծածանում էր կեղծ խաղաղության դրոշակը, թե խաղաղության պայմանագրի նախաստորագրումով խաղաղություն են բերել, վերջ կոնֆլիկտին, բայց կարճ ժամանակ անց պայթեց

ԳՈՐԻՍ

ԱՅՍ ԿԻՐԱԿԻ ՏԱԹԵՎ ՊԻՏԻ ԳՆԱՅԻՆ, ԱՅՆ ԷԼ՝ ՄՈՒՐԱՁՆԵՐԸ ՓՈՐՆԵՐԸ ՄՆԱՑ

Վաղարշապատի ընտրություններից հետո Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ ՔՊ-ի թեկնածու Արգիշտի Մեխակյանին ձայն տալով, մարդիկ իրենց կարեւոր լիցք տվեցին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ուղղությամբ արշավելու: Երեկ «Հրապարակը» գրել էր, որ Եկեղեցու դեմ պայքարի շրջանակներում, կարգալույծ եղած հոգեւորականների եւ ոմն ֆեյքի հրապարակումների հիման վրա գործեր են հարուցվել Արշակ սրբազանի դեմ: Հիշեցնենք, որ Արշակ սրբազանին մեղադրում են փողեր լվանալու, պատանդ վերցնելու եւ Գարեգին Ա կաթողիկոսին թունավորելով սպանելու մեջ. հիշեցնենք, որ Գարեգին Ա կաթողիկոսը մահացել է քաղցկեղից: Սակայն Եկեղեցու դեմ արշավն այսքանով չի սահմանափակվում, նոյեմբերի 23-ին Փաշինյանը ներկա կլինի Արարատի մարզի Արարատ գյուղի Սբ Հակոբ եկեղեցու պատարագին, որը մատուցելու է Տեր Երվանդ քահանա Բաբայանը: Այս հարցերի շուրջ «Հրապարակը» զրուցել է Գորիսի տարածաշրջանի հոգեւոր հովիվ **Տեր Ահարոն քահանա Մելքումյանի** հետ:

- Ասում են, որ Խաչիկ գյուղում Նիկոլ Փաշինյանը մասնակցել է պատարագին՝ Հայ առաքելական եկեղեցու կանոններով:

- Ոչ: Մեր ծիսական պատարագամատույցում՝ խորհրդատետրում կան հիշատակումներ, որոնք պարտադիր են արվում, իսկ այս պարագայում Խաչիկ գյուղում ոչ թեմի առաջնորդին հիշատակեցին, ոչ էլ Ամենայն հայոց կաթողիկոսին: Բացի այդ, պատարագը կիսատ-պռատ էր, որքան նկատեցի: Մի բան հիշեցի. մեկը քահանայի մոտ է գնում, ասում է՝ Տեր Հայր, թանով պատարագ լինո՞ւմ է, ասում է՝ իհարկե, ոչ: Հիմա իրենց արածն այդ թանով պատարագներն են՝ Աստծո բարկությունն են շարժում պարզապես: Մեծ գումար է դրված, իրենք հուդաներ են փնտրում: Գիտեք, սա որ նման բաներ է անում, շատ լավ է, որովհետեւ այն մարդիկ, ովքեր Աստծուն ծառայելու համար չեն մտել եկեղեցի, այլ սողոսկել են, որպեսզի մամոնա ունենան, այդ մարդիկ ջրի երես են դուրս գալիս: Դա լավ կողմ էլ ունի, հիմա սա է՝ թող դուրս գան, Եկեղեցին մաքրվում է այդ թաքնված մարդկանցից, այդ երեսուն արծաթով վաճառվածներից: Վարդան Այգեկցին իր գրվածքներից մեկում մի հետաքրքիր դրվագ ունի, որտեղ ասվում է՝ քահանայություն կա՝ Աստծուց է, քահանայություն կա՝ սատանայից է: Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» կարդում ես, տեսնում ես՝ բան չի փոխվել, նման մարդիկ միշտ եղել են: Հիմա նրանք, ովքեր որ իսկապես Քրիստոսինն են, որեւէ դրամական միջոցով, այս աշխարհին կապող որեւէ բանի հետ չեն կապվի: Նրանք, ովքեր Քրիստոսի քահանաները չեն, այլ մամոնային են ծառայում, Հուդան էլ էր, չէ՞, այդպիսին: Մեր քահանաներից մեկն է գրել՝ տեսնո՞ւմ ես, հիմա էլ այլ եկեղեցի է գնում, ես գրեցի՝ երեսուն արծաթ, ուրիշ ոչինչ:

- Կարո՞ղ ենք ակնկալել, որ Մայր Աթոռը շուտով Խաչիկ գյուղի քահանային կարգալույծ կանի:

- Չգիտեմ, բայց ես գիտեմ, որ իրենք ուզել են այս կիրակի Տաթեւում անել պատարագ, իրենց ցանկությունն է եղել, անգամ քոլեջում դասախոսներն են հայտարարել, որ մյուս կիրակի Տաթեւ են գնալու, էն էլ՝ մուրազները փորները մնաց: Իրենք պատարագին մասնակցելու նախապայման ունեն, ասում են՝ կաթողիկոսին պիտի չհիշեք: Դե, իրենք նախապայմանը դնում են, բայց նաեւ դրա համար վճարում են:

- Այսինքն՝ Տաթեւի վանահայրերից ոչ ոք չի՞ համաձայնել:

- Ես անձամբ եմ լուրն ուղարկել իրեն, որ հանկարծ նման սխալմունք չգործի:

- Տեր Միքայելի՞ն նկատի ունեք:

- Այո, բայց այնտեղ վանահայր էլ կա, որ լուրն ուղարկել եմ եւ ոչ միայն ես: Իրենք ի գիտություն են ընդունել դա, որովհետեւ նրանք պայման ունեն. եթե կաթողիկոսի անունը հիշատակվում է պատարագին, ուրեմն հրեշի ներկայությունը դառնում է զրո: Իր նպատակը կաթողիկոսին հեռացնելն է, չէ՞:

- Ստացվում է՝ այն հոգեւորականները, ովքեր Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ պատարագ են մատուցել ու չեն հիշատակել Վեհափառի անունը, գումա՞ր են ստացել դրա դիմաց:

- Նախ, իրենք կանոնական սխալ են արել՝ մեկ, որովհետեւ մեր խորհրդատետրում պատարագին պարտադիր է այդ աղոթքը՝ պարտադիր է: Մեր խորհրդատետրն առաջին դարում է կազմվել, հետագայում արդեն Նարեկացու աղոթքն են զետեղել, Սուրբ Բարսեղ Կեսարացին է հիմնականում մեր պատարագների խորհրդատետրը կազմել: Քահանան երբ պիտի օծվի, ինքն ընծայման կարգի մեջ ուխտ է անում Աստծուն, որ խոնարհաբար պիտի ծառայի Եկեղեցուն եւ հավատարիմ մնա Եկեղեցու վարդապետությանը, Եկեղեցու կաթողիկոսին եւ այլն: Այսինքն՝ եթե նա չի հիշատակում, ուրեմն դրժում է այդ թուղթը: Մեր խորհրդատետրում հստակ նշված է, որ քահանան բարձրաձայն աղոթքով պիտի անպայման հիշի Ամենայն հայոց կաթողիկոսին, մենք թեմի առաջնորդին ենք հիշում նաեւ, մեր հայ ազգի համար ենք այդ աղոթքը բարձրաձայն ասում: Այնպես որ, մենք կարող ենք պնդել, հատկապես, ըստ օդից կախված լուրերի, հինգ միլիարդ են ներդրել, որպեսզի կարողանան երեսուն այդպիսի հուդա գնել, այո, այդ առումով կարող ենք պնդել, որ գնել են:

- Արշակ սրբազանին մեղադրում են Գարեգին Ա կաթողիկոսին թունավորելով սպանելու մեջ: Կարո՞ղ է գործող հոգեւորականներից մեկին էլ Պապ թագավորի սպանության մեջ մեղադրեն, եթե այսպես գնա:

- Սատանան՝ ինքը, ի սկզբանե պայքարում է միության դեմ, նրա գործը պառակտելն է, հիմա սա ի՞նչ է անում՝ սատանայի գործ է անում, պառակտում է: Որպեսզի կարողանա պառակտել, նաեւ զրպարտում է, որովհետեւ սատանան նաեւ զրպարտիչ է: Հիմա եթե մենք նայում ենք սրա գրած գիրքը, այդ կարգի անբարո արժեքներ կրող երեւույթն իրավունք ունի՞ ինչ-որ մեկին բան ասի: Այստեղ են ասել՝ գողը դուրս է եկել, բարձր գոռում է՝ բռնեք գողին: Նրա նպատակը ո՛չ Ամենայն հայոց կաթողիկոսն է, ո՛չ Արշակ սրբազանը, ո՛չ Պողոսն է, ո՛չ Պետրոսն է, նրա նպատակը Եկեղեցին քայքայելն է, ջլատելն է: Մի բան հիշեցի. սատանան մի իմաստուն մարդու է հայտնվում, հետը զրուցում է: Իմաստունն ասում է՝ դու նման չես որեւէ մեկին, դու ուրիշ ես, այսինքն՝ որեւէ մարդու նման չես: Սատանան ասում է՝ ես նա եմ, որն ուժ է տալիս մի արժեքի փոխարեն: Իմաստունն ասում է՝ փաստորեն, վերցրածդ ավելի թանկ է, քան թե այն, ինչ որ տալիս ես: Սատանան ասում է՝ ես քեզ կտամ մի այնպիսի գիտություն, այնպիսի հնարավորություն, որ մահկանացուներին հասու չէ: Իմաստունն ասում է՝ ուժը եւ քո տված հնարավորությունն առանց իմաստության կործանիչ են: Այդ դեպքում, ասում է, ես քեզ մեծ փող ու հնարավորություն կտամ, իմաստունն ասում է՝ փողն ու հնարավորությունն էլ առանց ճշմարիտ գիտության կործանիչ են, էլի: Սատանան ասում է՝ բա ինչի՞ ես այսպես ապրում, դժվար ես ապրում, խնդիրներ ունես, ոնց որ այս սատանի ճուտն է շատ քահանաների ասում՝ դժվար ես ապրում, լիքը խնդիրներ ունես եւ այլն, քեզ պե՞տք է այսպես ապրելը, ինչի՞ համար ես այսպես ապրում: Իմաստունն ասում է՝ որ վերջում քո կողքին չլինեմ: Հիմա այս սատանի ճուտն է, գնում է քահանաներին գայթակղում է: Ով իմաստնություն ունի, ասում է՝ գնա, հետեւս գնա, չար սատանա, իսկ ում նպատակը փողն է, մարդ-դրամ, նյութ-թույն: Ով ինչ փնտրում է, այն էլ գտնում է այս կյանքում:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԱՂԱՓԱՐԸ ԴԱՐՁԵԼ Է ԱՄԵՆԱԱՆՊԻՏԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ

Կար մի շրջան, երբ թվում էր, թե Հայաստանում հակառուսական տրամադրությունները գերակշռում են, եւ մարդիկ օրեցօր ավելի շատ իրենց ապագան տեսնում են Արեւմուտքի հետ, սակայն վերջին ՏԻՄ ընտրությունները ցույց տվեցին մի պատկեր, որն այնքան էլ հուսադրող չէ արեւմտամետ ուժերի համար: Թե՛ Գյումրու, թե՛ Վաղարշապատի ՏԻՄ ընտրություններում արեւմտամետ ուժերն այդպես էլ չհաղթահարեցին անգամ անցողիկ շեմը, մինչդեռ կանխատեսումներ կային, որ գալիս պառլամենտական ընտրություններում նրանք կարող են էական ազդեցություն ունենալ եւ մեծ թվով ձայներ հավաքել:

Քաղաքագետ, գրականագետ **Անուշ Սեդրակյանից** «Հրապարակը» հետաքրքրվեց՝ գուցե հայտնի ուժերն այնքան են աղավաղել արեւմտամետության գաղափարը, որ այդ պատճառով հայտնի ուժերն այդքան քիչ ձայներ են ստանում: Սեդրակյանը նկատեց. «Այնուամենայնիվ, եկեք արձանագրենք, որ ՏԻՄ ընտրությունները բավականին անձնավորված ընտրություններ են: Հերիք չէ, որ հայաստանյան բոլոր ընտրություններն են խիստ անձնավորված, դեռ մի բան էլ փաստացի կրկնակի, եռակի անձնավորված են ՏԻՄ-երը, բայց եթե գոնե համապետականի ժամանակ գաղափարի կողքին անձն է դրվում, ապա ՏԻՄ-երի պարագայում բացառապես անձերի հետ գործ ունենք, այսինքն՝ գործ ունենք անձերի ընտրության հետ: Եթե Էջմիածնի ընտրություններին նայենք, ապա կա մի դաժան ճշմարտություն: «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը տարել է ՔՊ-ի ձայների որոշակի մասը: «Ազատ դեմոկրատներն» էլ ունեն արեւմտամետ կողմնորոշում, սակայն այստեղ արեւմտամետությունը չէ, որ ազդել է հասարակության տրամադրության վրա: Երբ ասում են, որ ՏԻՄ ընտրություններում ընդդիմությունը ձայները մասնատել է եւ այլն, եկեք հիշենք, որ «Ազատ դեմոկրատների» ձայները ՔՊ-ին մոտ ձայներ են: Նրանք փաստացի շատ լավ արդյունք են գրանցել»:

Իսկ որտե՞ղ մնացին գաղափարները, որոնց վրա քաղաքական ուժերը պարբերաբար շեշտադրումներ են անում: «Հայաստանում այլեւս վաղուց գաղափարը դարձել է ամենաանպիտան երեւույթը: Նիկոլ Փաշինյանն ինքն էլ ասաց, որ ոչ մի «իզմ» չի ընդունում, ինչը շատ հարմար էր նրա համար, որպեսզի ոչ մեկը նրան չմեղադրեր դավաճանության մեջ: Որովհետեւ, եթե դու «իզմ»-եր չունես եւ գաղափարի ջատագով չես, ապա ինքնաբերաբար կարող ես հավասարապես ընդունել եւ մերժել բոլոր գաղափարները, բայց ակնհայտ է, որ գաղափարական բազան երկու դեպքում է լինում հրեշավոր. առաջին՝ երբ այն չափից ավելի ուռճացվում է եւ երբ անտեսվում է ամբողջապես: Հայաստանում այն ամբողջապես անտեսված է»:

Գուցե արեւմտամետ ներկայացող ուժերն այնքան են ապականել արեւմտականության գաղափարը, որ նաեւ դմ է ազդել մարդկանց անտարբերության վրա: «Առայժմ ես կարող եմ ուրախությամբ գրանցել, որ հակառուսական տրամադրությունները մեզանում շատ ավելի մեծ ու տեսանելի են, քան հակաարեւմտյան տրամադրությունները: Մենք՝ մեր այսօրվա կարգավիճակով մի տեսակ նման ենք առաջին հանրապետության գեոպոլիտիկ եւ հանրային խճանկարին, սակայն այդ շրջանն այնքան տխուր ավարտ ունեցավ, որ անգամ չեմ ուզում համեմատություններ անել, թեպետ շարունակ մտքիս մեջ դա է»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ ԿՀԵՌԱՑՆԵՆ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՍՏԱՏԵԼՈՎ ՀԱԿԱԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը ներկայացնող տարբեր պաշտոնյաներ Թուրքիա հաճախացած այցերի ժամանակ կատարում են նվաստացուցիչ հայտարարություններ, որոնք նվաստացնում են ոչ միայն հայտարարության հեղինակին, այլեւ վիրավորում են միլիոնավոր հայերի եւ նրանց զգացմունքները: Նրանք աղերսում, ծնկաչող խնդրում են Թուրքիային՝ կարգավորել հարաբերությունները Հայաստանի հետ՝ հաստատել դիվանագիտական հարաբերություններ եւ բացել սահմանը: Թուրքիայի իշխանություններն արհամարհում են այդ նվաստացումները, որովհետեւ նրանց համար մի քանի հայի ինքնանվաստացումը չի կարող գործողությունների ուղենիշ լինել:

Հերթական ինքնանվաստացման ակտին ենք ականատես եղել, երբ Փաշինյանի կողմից Հայաստանի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ նշանակված Սարգիս Խանդանյանը Թուրքիայում տեղի ունեցող ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի աշնանային նստաշրջանում ունեցած իր ելույթում ասել է. «Թուրքիայում գտնվելով, չեմ կարող չարտահայտել իմ լավատեսությունը, որ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացը նույնպես շուտով կբերի դրական արդյունքներ: Այժմ ընթացող կառուցողական եւ ակտիվ քաղաքական երկխոսությունը մեզ հույս է տալիս, որ այն շուտով կվերածվի մեր հարաբերությունների ինստիտուցիոնալացման, սահմանների բացման եւ ավելի լայն համագործակցության»: Արդեն չորս տարի շարունակ սրանք լավատեսություն են հայտնում, բայց թուրքերը տրորում եւ ոտնակոխ են անում սրանց լավատեսությունը, բայց սրանք նույն համառությամբ շարունակում են լավատեսություն դրսեւորել:

Սահմանի բացումն իրականում ոչինչ էլ չի տալու Հայաստանին եւ հայ հասարակությանը, բայց Փաշինյանի իշխանության համար դա չափազանց կարեւոր քարոզչական քայլ կլինի, կարող են ասել, թե՝ տեսեք, 1993 թվականից հետո Թուրքիան սահմանը փակել էր, այս տարիների ընթացքում տարբեր իշխանություններ փորձել են հասնել սահմանի բացմանը, բայց անհաջողության են մատնվել, հիմա մենք կարողացանք անել այն, ինչը ոչ մեկին չէր հաջողվում: Նրանք խնդրում են, որ Թուրքիան դա անի գոնե ժամանակավոր՝ հաջորդ տարվա հունվարից մինչեւ հունիսի 7-ը. այդ օրը նշանակված են խորհրդարանական ընտրություններ, դրանից հետո կարող են նաեւ փակել սահմանը: Բայց Թուրքիան համառորեն հրաժարվում է դա անել՝ պահանջելով ավելի խորը նվաստացում եւ նորանոր զիջումներ: Չնայած չի բացառվում, որ հաջորդ տարվա սկզբին մի քանի ամսով բացեն՝ որպես Փաշինյանի եւ ՔՊ-ի քարոզարշավին տրամադրվող հումանիտար օգնություն:

Փաշինյանի եւ ՔՊ-ականների լավատեսության աղբյուրը ոչ միայն թուրքերի առջեւ իրենց ծնկածալուկ դիրքն ու դեմքի հնազանդ արտահայտությունն է, իրենց թվում է, որ Թուրքիայի վրա ազդելու համար հիմա իրենք այլ լծակ էլ ունեն, ազդեցիկ լծակ՝ ի դեմս ԱՄՆ աջակցության, որ ԱՄՆ իշխանությունները եւս կարող են ճնշում գործադրել Թուրքիայի իշխանությունների վրա, որ նրանք գնան սահմանի բացմանը: Դրա համար քծնանքի եւ շողոքորթության մեջ հմտացած ՔՊ-ականներն առիթը բաց չեն թողնում՝ ԱՄՆ իշխանություններին եւ այդ երկրի նախագահին քծնելու եւ շողոքորթելու համար: «Մենք գնահատում ենք Միացյալ Նահանգների կարեւոր դերը եւ նախագահ Թրամփի առաջնորդությունը, որը, իսկապես, իրականություն է դարձրել մեր այսօրվա քննարկման թեման»,- Թուրքիայում հայտարարել է սույն ՔՊ-ական ինդիվիդումը՝ մտածելով, որ ամերիկյան հատուկ ծառայությունները հաստատ իրենց երկրի նախագահին կփոխանցեն, որ ինչ-որ մեկը Հայաստանից իրեն հռչակել է առաջնորդ եւ գնահատում է իր առաջնորդությունը:

ՔՊ-ականներին թվում է, որ Թրամփի հետ պայմանագիր ստորագրելով եւ Հայաստանի տարածքի նկատմամբ վերահսկողությունն արտապատվիրակելով ԱՄՆ-ին, իրենք, ի դեմս ԱՄՆ-ի, ձեռք են բերել հզոր դաշնակից կամ հովանավոր: Իրականությունը, սակայն, այն է, որ ԱՄՆ իշխանությունները Հայաստանից ստացել են այն, ինչ իրենց պետք է, այս տարածքը, որտեղով անցնելու են գազային եւ նավթային, գուցե երկաթուղային ենթակառուցվածքները: Հայաստանի մնացած տարածքն ամերիկացիներին ընդհանրապես չի հետաքրքրում, եւ եթե իրենց պետք լինի, կարող են մի ինչ-որ պահի Մեղրիում բարձրացնել անջատողականության հարց եւ ճանաչել Մեղրիի հանրապետությունը՝ որպես անկախ պետություն, ինչպես դա ժամանակին արեցին Պանամայի դեպքում, չեղած տեղից ստեղծելով Պանամա պետություն:

Ամերիկացիներին ոչ միայն պետք չէ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը, այլեւ, ընդհակառակը՝ իրենց ուզածը ստանալուց հետո նրանք կարող են Հայաստանում գեներացնել հակաթուրքական տրամադրություններ, դրանով թուրքերին եւ մյուսներին ցույց տալու համար, որ այդ ճանապարհի կամ միջանցքի վրա իրենց ներկայությունն է, որ կարող է ապահովել դրա բնականոն գործունեությունը: Երբ Փաշինյանը միջանցքը հանձնի ամերիկացիներին, ամերիկացիներն ամեն ինչ կանեն՝ իրեն հեռացնելու եւ Հայաստանում թունդ հայրենասիրական, հակաթուրքական-հակաադրբեջանական իշխանություն ունենալու համար, որն անպայման կուզենա հետ վերադարձնել միջանցքը, բայց ամերիկացիներն անձնազոհաբար կպաշտպանեն հայ ազգայնականներից:

Ամերիկայի Միացյալ Նահանգներին այդ միջանցքը պետք է Կենտրոնական Ասիայի գազն ու նավթը Եվրոպա փոխադրելու համար: Ամերիկացիները հասկացել են, որ իրենք աշխարհին չեն կարող կառավարել տեխնոլոգիական կամ տնտեսական առաջնորդության կամ դիկտատի միջոցով, քանի որ աշխարհում, ի դեմս Չինաստանի, հայտնվել է երկիր, որը եւ տնտեսապես, եւ տեխնոլոգիապես կարող է առաջ անցնել իրենից: Միացյալ Նահանգները հիմա փորձում է գլոբալ վերահսկողություն հաստատել էներգիա արդյունահանող երկրների, դրանց տեղափոխման եւ իրացման շուկաների վրա: Հետեւեք Դոնալդ Թրամփի հանդիպումների աշխարհագրությանը եւ կհամոզվեք դրանում, գումարած աշխարհում ամենամեծ նավթի պաշար ունեցող Վենեսուելայի նկատմամբ ամեն գնով վերահսկողություն հաստատելու ցանկությունը: Իսկ Հայաստանը ոչ արդյունահանող երկիր է, ոչ էլ իրացման շուկա, կարող էր մաս կազմել տեղափոխմանը, բայց Փաշինյանի շնորհիվ դուրս է մնում նաեւ դրանից: Չնայած տարեկան կարող են մի քանի միլիոն դոլար շպրտել՝ որպես բարոյական վնասի փոխհատուցում:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԾՆՈՂՆԵՐԻՆ ԽՐԱՏՆԵՐ ՏԱԼՈՒՑ ԱՌԱՋ ԶԲԱՂՎԵՔ ՁԵՐ ԳՈՐԾՈՎ, ՏԻԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը հասարակ բլոգերի նման եթեր է մտնում ու ծնողներին զգուշացնում, որ դեղատուփերը, թունավոր նյութերը, լվացման միջոցները՝ ժավելի սպիրտը, ացետոնը, այլ քիմիական նյութեր, հեռացնեն երեխաների համար հասանելի տեղերից: «Մենք 1 ամիս է՝ մանրամասն ուսումնասիրում ենք 2025 թվականին մանկական հիվանդացության եւ մահացության պատճառները՝ հասկանալու համար, թե ինչու ունենք աճ: Քայլեր ենք ձեռնարկել, ոչ մի երեխա պետք է չկարողանա հասանելիություն ունենա դեղորայքին, տան կենցաղում օգտագործվող վտանգավոր նյութերին»,- «լայվ է մտել» նախարարը:

Այլ կերպ ասած, նախարարությունն ուսումնասիրություն է կատարել ու հանգել նրան, որ մանկական մահացության աճի համար մեղավոր են ծնողները, ընտանիքը: Որքանո՞վ է սա բացատրում մանկական հիվանդացության եւ մահացության ավելացումը: «Առողջության իրավունք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության համանախագահ **Ծաղիկ Վարդանյանը**, ի պատասխան, վիճակագրություն է ներկայացնում. «Այս տարի 69 դեպք կա, իսկ 24 թվին եղել է 42 դեպք, այսինքն՝ շուրջ 64 տոկոսով ունենք ավելացում, ու սա պատճառ է, որ խրատական խոսք ասվի, որ երեխաները հանկարծ ժավել, մաքրման նյութեր չուտեն: Իմ կարծիքով, սա շատ փոքր հատված է, եւ իրականում մանկական հիվանդացության ու մահացության ավելացումը կապված է մանկաբուժական ծառայությունում առկա խնդիրների հետ, որոնք տարեցտարի ավելանում են»: Փորձագետը 2 գլխավոր խնդիր է մատնանշում, որոնց լուծումը կախված չէ երեխաների ծնողներից, այլ կախված է հենց նախարար Ավանեսյանի աշխատանքից:

«Առաջինը՝ նեղ մասնագիտական, մանկական բժիշկների խիստ պակաս կա, մանավանդ՝ մարզային բնակչության համար, մարզային հիվանդանոցներում, պոլիկլինիկաներում՝ մանկական ակնաբանների, նյարդաբանների, քիթ-կոկորդականջաբանների եւ այլն: Սա էականորեն փոխում է ախտորոշման որակը, ավելի շուտ հայտնաբերելիությունը, եւ այս խնդիրները խորանում են: Երկրորդն էլ այն է, որ մեծ հարցեր կան՝ բուժակ-մանկաբարձական կետից սկսած, «ամբուլատորիա-պոլիկլինիկա-մարզային հիվանդանոց»՝ այս շղթայի անխափան աշխատանքի հետ կապված, որոնք չեն լուծվում: Մի քանի տարի առաջ մանկաբուժական ծառայությունը մակարդակավորվեց, ունենք 1, 2, 3-րդ մակարդակի ծառայություններ, առանձնացվեցին փաթեթները, գները, թե որ հիվանդությունների ու վիճակների մեջ երեխան որտեղ է բուժվելու, բայց այս ամենը էֆեկտ ու դրական ազդեցություն չի ունեցել: Մինչեւ հորդորելն ու ծնողներին խրատներ տալը, պետք է զբաղվել սեփական, իր կողմից կառավարվող համակարգի մանկաբուժական ծառայություններում առկա խնդիրների վերհանմամբ ու լուծմամբ: Թե չէ, ստացվում է՝ էլի մեղավոր են մարդիկ»:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԱՇԽԱՐՀ

ԵԿԵՂԵՑԻՆ՝ ԸՆԴԴԵՄ ԲՌՆԱՊԵՏԵՐԻ

ՀՀ գործադիր իշխանության ղեկավարը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Հայրապետին եւ եպիսկոպոսներին թիրախավորում է որպես վտանգ, քանդում ՀԱԵ-ի միասնության հիմքերը, քաղաքականացնում հոգեւոր սպասավորներին, մշտական սթրեսի մեջ պահում ճշմարիտ հավատացյալներին: Ազգային ողբերգության վերաճելու միտում ունեցող այս դրամատիկ իրավիճակը, սակայն, զուտ հայկական երեւույթ չէ: Վերհիշելով տարբեր երկրներում բորբոքված դեպքերը՝ պատմության դասերը չսերտած եւ խիղճն ու բանականությունը դեռեւս չկորցրած յուրաքանչյուր ոք կհամոզվի, որ պետության անողոք հարձակումները Եկեղեցու դեմ բերելու են անխուսափելի աղետ եւ արյունահեղություն:

«MIT BRENNENDER SORGE»

«Խորին անհանգստությամբ» բառերով է սկսվում Հռոմի Պիոս ԺԱ պապի 1937 թ. մարտի 14-ին հրապարակած կոնդակը՝ Գերմանիայում կաթոլիկ եկեղեցու տագնապալի վիճակի մասին: Այն դատապարտում էր ռասայականությունը՝ առհասարակ եւ, մասնավորաբար՝ նացիզմը՝ որպես քրիստոնեական քաղաքակրթությունը ոչնչացնելու նպատակ հետապնդող աստվածանարգող համակարգ: Իշխանության տիրանալուց մի քանի տարի անց Հիտլերի թիրախում հայտնվեցին կաթոլիկները, նրանք զանգվածաբար հեռացվում էին պետական ծառայությունից, սահմանափակվում էր կաթոլիկ քարոզիչների եւ լրատվամիջոցների գործունեությունը, նրանց ներկայացվում էին ոսկու մաքսանենգությամբ, արտարժույթի անօրինական գործարքներով զբաղվելու, սեռազեխ կյանք վարելու շինծու մեղադրանքներ: 1936թ. Հիտլերը, բռնաճնշումները սաստկացնելու սպառնալիքի տակ, Մյունխենի արքեպիսկոպոսից պահանջեց ավելի ջանասիրաբար համագործակցել նացիստական ռեժիմի հետ: Գերմաներեն գրված պապական կոնդակը Ծաղկազարդի (Տիրոջ՝ Երուսաղեմ մուտքի) տոնի օրը ընթերցվեց Գերմանիայի կաթոլիկ եկեղեցիներում: Պիոս ԺԱ պապի կոնդակի բովանդակությունը եւ այն դիվանագիտական փոստով երկիր բերելու, ինչպես եւ հրապարակելու եղանակը ցնցեց նացիստներին: Վարչախումբը նոր պատժիչ գործողությունների դիմեց. սաստկացան կաթոլիկ հոգեւորականների հալածանքները, նրանք հայտնվեցին պատժիչ մարմինների տոտալ հսկողության ներքո, հազարավոր հոգեւորականներ ու հավատացյալներ ձերբակալվեցին, շատերն իրենց մահկանացուն կնքեցին համակենտրոնացման ճամբարներում: Սակայն ազատ ու համախմբված կրոնական ինստիտուտների համախմբվածությունը սթափեցրեց անգամ Հիտլերին: Պաշտոնական Բեռլինը չխզեց կապերը Սուրբ Աթոռի հետ ու բավարարվեց միայն պաշտոնական բողոքով: Գերմանիայի կաթոլիկ համայնքների ու բարձրաստիճան հոգեւորականների միակամ դիմադրությունը «դարչնագույն ժանտախտի» վերահաս աղետի զգուշացում էր: Սակայն արտաքին աշխարհը, ցավոք, չլսեց տագնապի ձայնը, եւ վաղանցիկ շահերի ներհակությունների մեջ թաթախված խոշոր տերությունները ոչինչ չարեցին՝ համաշխարհային նոր պատերազմը կանխելու համար:

OPERATION BLUE STAR

«Կապույտ աստղ». այդպես էր կոչվում վարչապետ Ինդիրա Գանդիի հրամանով 1984թ. հունիսի սկզբին իրականացված հակաահաբեկչական գործողությունը: Բանակային հատուկ ստորաբաժանումները՝ զրահամեքենաների, տանկերի եւ ծանր հրետանու աջակցությամբ, գրոհեցին Փենջաբ նահանգի Ամրիթսար քաղաքում գտնվող սիկհերի կրոնական գլխավոր սրբավայրը՝ «Ոսկե տաճարը», այնտեղ ապաստանած սիկհ անջատողականների զինված խմբավորումները ոչնչացնելու նպատակով: Ըստ պաշտոնական տվյալների՝ զոհվեցին 83 զինվորական, 492 զինյալ եւ խաղաղ ուխտավոր: Ոչ պաշտոնական աղյուրները նշում են հազարավոր զոհերի մասին: Այս խիստ կասկածելի գործողությունից 5 ամիս անց իր նստավայրի բակում դիմահար կրակոցով սպանվեց Ինդիրա Գանդին: Ահաբեկչության անմիջական կատարողները վարչապետի թիկնազորի զինծառայողներ, կրոնական ծայրահեղականներ Բիանթ Սիգհը եւ Սաթվանթ Սինգհն էին: Ինդիրա Գանդիի սպանությանը հետեւեցին զանգվածային ջարդեր. հինուական մոլեռանդների ամբոխները ներխուժում էին սիկհերին պատկանող տներ եւ հաստատություններ, խմբակային բռնաբարության ենթարկում կանանց, սիկհերին որսում էին գնացքներում, ավտոմեքենաներում եւ գանահարելով կամ կենդանի այրելով սպանում:

ՆԻԿԱՐԱԳՈՒԱ, ԶԻՄԲԱԲՎԵ...

Կրոնական հետապնդումների արդի պատմության «երեւելի դեմքերից» է Նիկարագուայի նախագահ Դանիել Օրտեգան, որը կառավարել է 1985-90, 2007-25 թվականներին: Նրա վարչախումբն առանձնակի բռնության ալիք սանձազերծեց, սկսած 2018-ից: Թիրախում քաղաքական ընդդիմությունն էր եւ կաթոլիկ հոգեւորականներն ու միսիոներները: 2018-23 թվականներին կաթոլիկ եկեղեցու նկատմամբ կառավարության հրահրած թշնամության մթնոլորտում կալանավորվել, անօրինական բանտարկության է ենթարկվել, արտաքսվել մի քանի հարյուր մարդ, փակվել են բազմաթիվ լրատվամիջոցներ: Աղմկահարույց էր Մատագալպայի եպիսկոպոս Ռոլանդ Ալվարեսի եւ նրա գլխավորած թեմի 6 հոգեւորականների հալածանքների պատմությունը. նրանք տնային կալանքի ենթարկվեցին այն մեղադրանով, որ համացանցում աղոթում էին հանուն երկրում խաղաղության: 2023-ին եպիսկոպոս Ռոլանդ Ալվարեսը դատապարտվեց 26 տարվա բանտարգելության եւ զրկվեց Նիկարագուայի քաղաքացիությունից: Չնայած Վատիկանի եւ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների բողոքներին՝ հետապնդումները շարունակվեցին մինչեւ Օրտեգայի պաշտոնավարման ավարտը:

Գերազանցապես քրիստոնյաներով բնակեցված Զիմբաբվեի բռնապետ Ռոբերտ Մուգաբեի արյունոտ ռեժիմը ամենաբիրտ միջոցներով փորձեց իր վերահսկողության տակ առնել Եկեղեցու սոցիալական, կրթական եւ առողջապահական ծրագրերը՝ նպատակ ունենալով նրան զրկել ժողովրդի աջակցությունից եւ դրանով իսկ լռեցնել իշխանության հասցեին նրա քննադատությունը: Հետապնդումների հետեւանքով հազարավոր հավատացյալներ արտագաղթեցին Մոզամբիկ եւ Բոտսվանա, որը հրահրեց քաղաքական, ապա նաեւ՝ տնտեսական ճգնաժամ: Ի վերջո, ժողովրդի, զինվորականների եւ խորհրդարանի ճնշման տակ Մուգաբեն հրաժարական տվեց եւ հեռացավ ասպարեզից՝ պատմության մեջ մնալով իբրեւ ամենաաղքատ երկրներից մեկում ավելի քան 37 տարի իշխած կոռուպցիոներ ու իր անձի պաշտամունքը հաստատած բռնակալ:

... ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

ՔՊ-ի պարագլուխը, խելահեղ մտասեւեռումով, մեր Հայրենիքը տանում է դեպի աղետ: Եթե մոտեցող ընտրություններում ձայներ կորզելու մտադրությամբ Սուրբ Էջմիածնի վրա հարձակումը էլեկտորատի մի փոքր (բայց ագրեսիվ) հատվածում կարճաժամկետ եւ խիստ կասկածելի ոգեւորություն («դու») ծնի, ապա երկարաժամկետ հեռանկարում այն կդառնա քաղաքական պայթյունի պատճառ: Պատմությունը վկայում է՝ Եկեղեցին սպասում է, համբերում, բայց չի լռում, դառնում ընդդիմության բազմապատիկ ուժեղացած կենտրոն: Եկեղեցու, հոգեւորականների հետապնդումները, հավատացյալների կրոնական զգացմունքները վիրավորելը արձագանքվում են երկրի սահմաններից դուրս նույնպես: Միջազգային արձագանքը հաճախ հապաղում է, բայց այն գալիս է անսպասելի ու ծանր հարվածի տեսքով: Ղեկավարելով Եկեղեցու վրա հարձակումը՝ ՔՊ-ի պարագլուխը կհայտնվի մեծ ռիսկի զոնայում: Եկեղեցու դեմ բռնությունը կարագացնի իշխանափոխությունը, քանի որ վիրավորված ժողովուրդն արագ է ինքնակազմակերպվում եւ աներեւակայելի ուժեղ դիմադրություն է ցույց տալիս:

Արա ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԱԳԱՂԹԱԾՆԵՐԻՆ ԱՆՑԱԾ 2 ՏԱՐՈՒՄ ՉԵՆ ՏՆԱՎՈՐԵԼ



2025 թ. օգոստոսի 18-ին հղած իր ուղերձում վարչապետ Նիկոլ Փաշինյանը Արցախից բռնագաղթածների՝ Արցախ վերադառնալու իրավունքը մերժելով՝ հայտարարեց. «Ղարաբաղից տեղահանված մեր հայրենակիցների ապագայի մասին մեր պատկերացումը հետեւյալն է. նրանք մեր եւ միջազգային հանրության աջակցությամբ պետք է տնավորվեն Հայաստանի Հանրապետությունում եւ այստեղ ապրեն, ստեղծագործեն, հաստատվեն՝ որպես Հայաստանի Հանրապետության լիարժեք քաղաքացիներ»: Ինչքանո՞վ են Նիկոլ Փաշինյանի խոսքն ու գործն իրար համապատասխանում, ինչո՞ւ է նա խնդրի մասին խոսել «պետք է»-ով, Փաշինյանին ու նրա գլխավորած կառավարությանն անցած 2 տարում ի՞նչն էր խանգարում՝ արցախցիներին Հայաստանի Հանրապետությունում տնավորելու համար: 2023թ. աշնանը Արցախը հայաթափվելուց հետո Տավուշի մարզում բնակություն հաստատեց 780 ընտանիք, 2 հազար 970 անձ: Նրանց մի մասը, անցած գրեթե 2 տարում աշխատանք ու տուն չունենալով, հեռացավ Տավուշից: Նախկինում Տավուշի մարզպետարանից տեղեկացել էի, որ Արցախից բռնագաղթած ընտանիքներից միայն 10-ն է պետական բնակարանային ապահովման ծրագրով Նոյեմբերյան եւ Իջեւան համայնքներում բնակարան ձեռք բերել, բռնագաղթած արցախցիները Տավուշի մարզի մյուս 2 խոշոր համայնքներում՝ Բերդում եւ Դիլիջանում, բնակարաններ ձեռք չեն բերել: Այսպես է Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Փաշինյանի որոշմամբ 2021թ.ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը տնավորել բռնագաղթած արցախցիներին:

Հոկտեմբերի 21-ին մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում էի ուղարկել. «Հոկտեմբերի 21-ի դրությամբ Տավուշի մարզում Արցախից բռնագաղթած քանի՞ անձ է բնակվում, Արցախից բռնագաղթած քանի՞ ընտանիք է բնակարանային ապահովման պետական ծրագրով ապահովվել բնակարանով, ո՞ր համայնքներում»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Տեղեկացնում եմ, որ ս.թ. հոկտեմբերի 21-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզում բնակվում է ԼՂ-ից բռնի տեղահանված 1931 անձ, իսկ բնակարանային ապահովման պետական ծրագրի վերաբերյալ հարցերով առաջարկում ենք դիմել պետական լիազոր մարմին՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն»:

Տավուշի մարզում 2023 թվականին հաստատված 2 հազար 970 արցախցիներից անցած 2 տարում 1039 անձ Տավուշից հեռացել է: Հեռացել են, քանի որ նրանք Տավուշի մարզում սեփական բնակարան, մեծ մասը նաեւ աշխատանք չունեին: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը արցախցիների մասին հայտարարել է, որ նրանք մեր եւ միջազգային հանրության աջակցությամբ պետք է տնավորվեն Հայաստանի Հանրապետությունում եւ այստեղ ապրեն, ստեղծագործեն, հաստատվեն՝ որպես ՀՀ լիարժեք քաղաքացիներ, իսկ նրա քավոր մարզպետը, չգիտես ինչու, տեղեկատվություն չունի Տավուշի մարզում հաստատված, բնակարանային ապահովման պետական ծրագրի մասնակից արցախցիների մասին եւ մեզ առաջարկում է այդ հարցերով դիմել պետական լիազոր մարմնին՝ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Այսպես են խնդիրը կարեւորել, այսպես են տնավորել իրենց հայրենիքը, տունն ու ունեցվածքը կորցրած, բռնագաղթի սարսափներն ապրած արցախցիներին:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՄ «ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔ ԹԻՄ ԵՎՐՈՊԱ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախորդ հոդվածը՝ 1.11.2025թ. համարում

Առաջին քաղաքային համայնքը, որ այցելեցինք Սյունիքում՝ «Դիմակայուն Սյունիք թիմ Եվրոպա» ծրագրին մասնակցող ԵՄ երկրների դեսպանների հետ, Սիսիանն էր: Կանգառը Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) Սիսիանի մասնաճյուղում էր: Համալսարանը, ինչպես Երեւանում, Սիսիանում նույնպես ունի քոլեջ, որը տալիս է միջին մասնագիտական կրթություն: Սիսիանի մասնաճյուղի քոլեջը 2021-ից ընդգրկված է Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության (SDC) գլխավորությամբ իրականացվող մի ծրագրում, որի հապավումը ՄԱՎԵՏԱ է: Ինչի՞ մասին է այս ծրագիրը:

ՄԱՎԵՏԱ-ն իրականացվում է ՀՀ Արմավիրի, Սյունիքի, Տավուշի եւ Լոռու մարզերում եւ կոչված է գյուղատնտեսության ոլորտում արտադրության եւ կրթության զուգադրմամբ միջին մասնագիտական կրթություն տալու, ինչը ծրագրում ներգրավված անձինք կոչում են «դուալ կրթություն»: Նկատի ունեն, որ ծրագրում ներգրավված քոլեջների ուսանողները կրթությանը զուգահեռ արտադրամասերում արտադրական գործընթացի են մասնակցում: Արդյունքում՝ տեսական գիտելիքներն ամրապնդում են գործնական կիրառմամբ, կամ հակառակը՝ գործնական հմտություններն են լրացնում տեսական գիտելիքներով: Միով բանիվ՝ խորհրդային ժամանակների պրոֆտեխկրթության (մասնագիտական տեխնիկական կրթության):

Սակայն խորհրդային ժամանակներից եւ ՊՏՈՒ-ներից, իհարկե, կա նաեւ տարբերություն: ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղի քոլեջում, օրինակ, Շվեյցարիայի հետ ուղիղ համագործակցություն է հաստատված, փոխայցելություններ են լինում, ուսումնական հաստատությունների միջեւ շփումներ, տեխնիկապես արդիականացնել եւ հագեցվել է քոլեջի լաբորատորիան, որտեղ կատարվող հողի լաբորատոր անալիզի ծառայությունից կարող են օգտվել ամբողջ մարզի բնակիչները: Երեւում է, քոլեջը բավականին էլ ճանաչում ունի մարզում, քանի որ մի քանի տարի առաջ 2-3 տասնյակ ուսանող է ունեցել, հիմա՝ 300-400: Մասնաճյուղի տնօրենը՝ պրն Գագիկ Խաչատրյանը, ասաց. «Շենքային պայմանները թույլ չեն տալիս ավելի շատ ուսանողներ ունենալ»: Բայց դա էլ կարծես լուծվող հարց է. քոլեջն ընտրվել է «Դիմակայուն Սյունիք թիմ Եվրոպա» ծրագրի շրջանակում՝ վերանորոգվել, վերակառուցվելու համար:

Հայաստանում Շվեյցարիայի նորանշանակ դեսպանը՝ տիկ. Անդրեա Բարբարա Բաումանը, անկեղծ հետաքրքրությամբ ծանոթանում էր քոլեջում արված աշխատանքին, եւ տպավորություն էր, որ հետագայում էլ անձնական հետաքրքրություն եւ ներգրավվածություն կունենա, ինչը ծրագրերի իրագործման զգալի երաշխիք է:

ԳՈՐԻՍՈՒՄ ԱՄԵՆԱԿԱ ՖՐԱՆՍԻԱՆ

«Ամենակա» բառը դարեր շարունակ Աստծո մասին էր գործածվում: 20-րդ դարում, երբ ստեղծվեց ռադիոն եւ ամենուր՝ տանը, աշխատավայրում, փողոցում, տրանսպորտում ուղեկցում էր մարդկանց, ռադիոյի մասին էլ սկսեցին ասել ամենակա: Այժմ ես «ամենակա» բառը պետք է գործածեմ Գորիսում ֆրանսիական ներկայության առնչությամբ, որովհետեւ այդ մասշտաբն այլ բառով չես հաղորդի:

Առաջին միջոցառումը Գորիսում, որին դեսպանները մասնակցեցին, «Ավագ սերնդի կենտրոնի» բացումն էր, որն էությամբ Տարեցների տուն է, ունի մոտ 100 բնակիչ՝ միայնակ ծերեր Գորիսից, նաեւ՝ Արցախից տեղահանված: Տարեցների տուն հիմնելու գաղափարը «WINNET Գորիս» հիմադրամն էր հղացել, քաղաքային իշխանությունը շինությունն էր հատկացրել, ԵՄ-ն եւ Գերմանիայի դեսպանատունը ֆինանսավորել էին վերանորոգում-կահավորումը, եւ այժմ՝ դեսպանների ներկայությամբ եւ մասնակցությամբ, տան հանդիսավոր բացումն էր: Տունն իսկապես գեղեցիկ էր, հարմարավետ, եւ ակնհայտ էր, որ տարեցները, որոնց համար ամենքն այդքան ջանացել էին, ուրախ էին եւ գոհ: Նույնիսկ երգեցին, խոհանոցում էլ գաթա էին թխում, խմոր-խորիզի բուրմունքն էլ այնպես էր տարածվել, որ եվրոպացի հյուրերից մեկը ժամեր հետո դեռ Տարեցների տան գաթայից ու բուրմունքից էր պատմում: Իսկ ո՞ւր էր այդտեղ Ֆրանսիայի ներկայությունը:

Օ՜, Ֆրանսիան Գորիսում ամենուր է... «WINNET Գորիս» հիմնադրամի գլխավոր միջազգային գործընկերներից մեկը 90-ամյա պատմությամբ, «Ամեն մարդկայինը մերն է» կարգախոսով, 98 ֆեդերացիա եւ 90 հազար կամավորականներ միավորող, համաշխարհային տարածվածության Secours Populaire Francais ՀԿ-ն է, որի ներկայացուցիչները մեկշաբաթյա այցով Գորիսում էին, եւ նրանցից Նիկոլա Խուարեբը Տարեցների տան բացմանը խոսեց:

Այնուհետ գնացինք Գորիսի կենտրոնական հրապարակ, այդտեղ Ֆրանսիայի Պատվո հյուպատոսությունն էր: Երեկոյան գնացինք Գորիսի սիրտ-անոթային հիվանդությունների կենտրոն, այն հայ-ֆրանսիական հաստատություն է: Բուժհաստատության հարկաբաժիններից մեկում 2021-ից տեղակայված է մեծահասակների նեյրո-օրթոպեդիկ վերականգնման ծառայություն, որի հիմնադիրը 2020-ին Ֆրանսիայում ստեղծված Sante Armenie կազմակերպությունն է (նախագահ՝ պրոֆեսոր Արմեն Մեքինյան): Նեյրո-օրթոպեդիկ կենտրոնը հնարավոր է դարձրել նյարդային խնդիրներով տառապող հարյուրավոր անձանց բուժօգնություն ցուցաբերել Սյունիքում՝ առանց Երեւան տեղափոխելու: 2025-ին Sante Armenie-ն բացել է նաեւ մանկական նեյրո-օրթոպեդիկ ծառայություն:

Այժմ Sante Armenie-ի նյարդավերականգնողական բուժօգնությունը մատչելի է դարձել նաեւ շարժունակության խնդիրներ ունեցող անձանց: ԵՄ «Դիմակայուն Սյունիք, թիմ Եվրոպա» նախաձեռնության շրջանակում գործարկվել է սոցիալական տաքսի ծառայություն, որն ապահովում է հաշմանդամություն ունեցող անձանց տեղափոխումը Գորիս, Տեղ, Տաթեւ համայնքների բնակավայրերից Գորիսի բուժհաստատություններ, այդ թվում՝ Sante Armenie: Ծրագրի պատասխանատուն չեխական People in Need ՀԿ-ն է, որի գործունեության սկիզբը Հայաստանում թվագրվում է 1988-ին, երբ Սպիտակի երկրաշարժից հետո մի խումբ չեխ ուսանողներ կազմակերպել էին օգնության առաքում եւ իրենք էլ եկել էին Հայաստան՝ երկրաշարժից տուժած անձանց օգնելու:

Այժմ, Սյունիք ժամանած՝ ՀՀ-ում Չեխիայի դեսպան Պետր Պիրունչիկը եւ Ֆրանսիայի դեսպանատան առաջին խորհրդական տիկ. Ժուլի Ֆորը մյուս հյուրերի հետ հնարավորություն ունեցան տեղում գնահատելու մեր օրերում կատարվող արժեքավոր աշխատանքը:

ԿԱՊԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՇՈՒՄԵՐԻԱ ՈՒ ԱՆԴԻՆ

ԵՄ դեսպանների՝ սյունիքյան շրջայցի վերջին կանգառը Կապան քաղաքում էր: Սյունիքում Կապանը կոչում են Հայաստանի հարավային մայրաքաղաք, եւ դրանում ճշմարտություն կա: Ես առաջին անգամ էի Կապանում, եւ այդ քաղաքի մշակութային մակարդակը, աուրայի պատմական հագեցածությունը, անխառն հայկական էությունը, մարդկանց կրթվածությունն ու խորությունն ինձ ուղղակի ապշեցրին:

Կապանում առաջին միջոցառումը Սյունիքի մարզպետի հետ դեսպանների փակ հանդիպումն էր: Այսինքն՝ 1-1,5 ժամ ազատ ժամանակ կար, եւ, ինչպես աշխարհի ցանկացած քաղաքում կվարվեի, որտեղ առաջին անգամ էի լինում, քայլեցի կենտրոնական փողոցներից մեկով՝ քաղաքից, մարդկանցից, միջավայրից տպավորություն կազմելու համար: Մտա փողոցում իրար հերթագայող վաճառասրահներից մեկը, ինչ-որ բան հարցրի, տնօրինուհու հետ զրույց սկսվեց... եւ ինչ պարզվեց:

Պարզվեց՝ տիկնոջ որդին ռազմական սպա է, որ ուսանել է Հունաստանում, ծառայել է ՀՀ զինված ուժերում, հետո ռազմական կարիերան ավարտել է, անցել է այլ ոլորտ, ավելի բարեկեցիկ կյանքի, եւ ինչո՞վ է տարվել... շումերագիտությամբ: «Հիմա գտել է մեկին, ում մոտ շումերերեն է սովորում»,- պատմեց մայրը: Հայտնի պատմություն է, որ շումերագետների միջազգային մի գիտաժողովում հայազգի Արմեն Դավթյանը հրապարակավ ասել է. «Ընկերներ, որպեսզի դուք կարողանաք հասկանալ շումերերեն, պետք է նախ իմանաք հայերեն...»: Այլ ժողովուրդներ, լեզվաբաններ, «գիտնականներ» կարող են երկար դեգերել շումերագիտության լաբիրինթոսներում, սակայն ցանկացած գրագետ հայի հենց միայն Էրեբու-Էրեդու քաղաքների անունները, շումերյան Մարդուկ-Մարաթուկ աստվածությունը, նրա Մուշհուշ վիշապը անսխալաբար կհուշեն Շումերիայի կազմավորման վրա Հայկական բարձրավանդակի, հայերի եւ հայոց լեզվի ազդեցության մասին:

Ինչեւէ, առավել էականն այստեղ հազարամյակներ առաջ գոյություն ունեցած ու անցած Շումերիայի պարագան չէ, այլ հայերի անխորտակելի կապն իրենց պատմության, լեզվի, ինքնության հետ, արյան կանչն ու հետաքրքրությունն այդ ամենի հանդեպ: Զինվորական, որի հոբբին ռազմական կարիերայից հետո դառնում է շումերագիտությունը, որովհետեւ այն նոր էջեր է բացում հայության մասին: Կապանից անցում Շումերիա՝ հազարամյակների միջով, առօրեական մի խոսակցության ժամանակ, Կապանի սովորական մի փողոցում... Սա՝ առաջին վկայությունը, որ Կապանում մայրաքաղաքային աուրա է ու մակարդակ:

Սյունիքի մարզպետի հետ դեսպանների փակ հանդիպումից հետո ծրագրված էր այցելություն Կապանի Արվեստի թանգարան: Այդ թանգարանը, ցուցադրված կտավները, դրանց միտքը, ժանրային բազմազանությունը, էսթետիկան տպավորում էին վայրկենապես: Արեւելյան Եվրոպայի համարյա բոլոր երկրներում, որտեղ ես եղել եմ՝ Սլովակիա, Լեհաստան, Ուկրաինա, Լատվիա, Հունգարիա, Մոլդովա եւ այլն, եղել եմ նաեւ իրենց թանգարաններում, պատկերասրահներում եւ առանց չափազանցության կարող եմ ասել, որ այդ երկրների ոչ մի պատկերասրահ չունի կերպարվեստի այդքան տպավորիչ գործեր եւ հարուստ հավաքածու, ինչպիսին ցուցադրված էր Կապանի թանգարանում: Դա էլ երկրորդ վկայությունը Կապանի՝ մայրաքաղաքային աուրայի ու էության:

ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ, ՈՐ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԵՑԻՆ

Կապանի Արվեստի թանգարանում, սակայն, կտավներից ոչ պակաս, ինձ մի այլ դիպված զարմացրեց: Դեսպաններին դիմավորեցին թանգարանում, եւ աշխատակցուհիներից մեկն անգլերենով սկսեց կտավները ներկայացնել: Քիչ անց մի տղամարդ միջամտեց, թե՝ ջան, այսպես շատ դանդաղ է ստացվում, արի՝ ես արագ հայերեն ներկայացնեմ, թարգմանիչը կթարգմանի: Ու արագ սրահից սրահ անցնելով՝ ծանոթացնում էր. սա այս կտավն է, դա այն նկարչի գործն է, սա այս ժամանակ է ստեղծվել, այն կտավի հեղինակի ընտանիքում բոլորն են նկարիչներ, սա բազմաժանր նկարիչ է, ունի ավելի հայտնի գործեր... ու այդպես՝ բոլոր սրահներում, մինչեւ ելք: Ենթադրեցի, որ թանգարանի ղեկավարությունից է եւ կեցցե, որ այդպես գիտի հավաքածուն:

Դրանից հետո գնացինք կից մասնաշենքը, որտեղ Կապանի Գեղարվեստի եւ Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոններն են: Այդ կենտրոնները ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ավելի

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

➥ էջ 8

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼՆ ԻՐ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁՈՎ ՏՎԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻՆ

Գյուլագարակ համայնքի ավագանու որոշմամբ, համայնքի բյուջեից պարբերաբար գումարներ են փոխանցվում «Վարդաբլուր համայնք» ներդրումային հիմնադրամին: Ըստ պետռեգիստրի՝ հիմնադրամի տնօրենը Սամվել Օհանյանն է՝ Գյուլագարակի համայնքապետի առաջին տեղակալ Ռուսլան Օհանյանի

եղբայրը: Հիմնադրամն էլ գրանցված է Լոռվա մարզի Վարդաբլուր համայնքի Սարի թաղամաս տ. 4 հասցեում: Այդ հասցեում է հաշվառված նաեւ Գյուլագարակի համայնքապետի առաջին տեղակալ Ռուսլան Օհանյանը:

Մենք **Ռուսլան Օհանյանից** հետաքրքրվեցինք, թե ինչ գործունեություն է իրականացնում հիմնադրամը, եւ ինչու են համայնքապետարանի բյուջեից գումարներ փոխանցվում հիմնադրամին:

««Խազեր» ՀԿ-ի, համայնքապետարանի եւ այլ ներդրողների հետ հիմնադրամը ծրագիր է իրականացնում համայնքի համար: Արվել է լուսավորության ծրագիր, եւ 10 կվտ արեւային պանելներ են տեղադրվել մշակույթի տան տանիքին»:

5 տարվա ընթացքում միայն այդ 2 ծրագիրն եք արել: «Հիմնադրամը գրանցված է եղել, բայց ֆինանսական ներդրումներ չեն եղել: Ծրագիրը, որ եղել է, արեւային պանելները նվիրել ենք համայնքին, ինչ գումար ծախսվել է արեւայինի համար, դա գումարի տեսքով հետ պիտի գար, մի մասը համայնքը պահեր իր հաշվին, մյուսը՝ փոխանցեր հիմնադրամին: Հիմնադրամը ստեղծվել է այն ժամանակ, երբ որ ես Վարդաբլուր համայնքի վարչական ղեկավարն էի: Քանի որ վարչական այլ լիազորություններ չուներ, այդ նպատակով էլ ստեղծեցինք այդ հիմնադրամը, որ համայնքի համար ծրագրեր իրականացնենք: Ասեմ, որ 2016 թվականին խոշորացումից հետո դարձել եմ վարչական ղեկավար, 2020 թվականի ապրիլի 30-ին իմ դիմումի համաձայն ազատվել եմ աշխատանքից՝ նախկին համայնքի ղեկավարի հետ խնդիրների պատճառով: Հիմնադրամին փոխանցված գումարներն արտադրված հոսանքի գումարն են, որը նշված է մեր պայմանագրերում, գործում է օրենքի սահմաններում, ստեղ որեւէ շահերի բախում չի կարա լինի»,- ասաց Ռուսլան Օհանյանը:

«Պարոն Օհանյան, ավագանու մեկ այլ որոշման մեջ նշված է. ««ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնք» ՀՈԱԿ-ի գործունեությունը ժամանակավորապես իրականացնելու նպատակով տալ համաձայնություն՝ համայնքի կողմից վարձակալելու ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ գյուղի բնակիչ Ռուսլան Սանասարի Օհանյանի սեփականություն հանդիսացող՝ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի Կենտրոնական փողոց թիվ 33/1 հասցեում գտնվող բնակելի տունը, ամսական 90 000 (իննսուն հազար) ՀՀ դրամ վարձավճարով»»: «2023 թվականին սկսել են Վարդաբլուր մանկապարտեզի շինարարությունը: Ճիշտն ասած, ոնց որ գյուղում ազատ տարածք չէին գտնում՝ տրամադրելու համար, որ մանկապատեզը չփակվի, մինչեւ շենքը կառուցեն: Ինձ առաջարկել են, կոնկրետ այդ նիստում էլ որ հաստատել են ու վարձակալել են, այդ նիստին ես չեմ մասնակցել, որպեսզի շահերի բախում չլինի: Նորմատիվներով, իրավական փաստաթղթերով վարձակալել են եւ ամսական 90 հազար դրամ համայնքապետարանից գումար են փոխանցում, մաքուր 81 հազար դրամ: Այդ տարածքը որպես հյուրատուն է եղել: Ճիշտն ասած, ինձ էլ ձեռք չի տալիս, որովհետեւ գիտեք, էլի, երեխեքն ինչ ձեւ են հաճախում: Դե, ռեմոնտի հետ կապված շատ բաներ են վնասել: Մանկապարտեզի շինարարությունն ավարտվել է, արդեն 2 շաբաթ է՝ մանկապարտեզը գործում է»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ինչ է նախատեսում ուկրաինական կարգավորման ամերիկյան նոր պլանը

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմի կողմից մշակված ուկրաինական հակամարտության կարգավորման նոր պլանը նախատեսում է Ուկրաինայի տարածքում ռուսաց լեզվին պետական կարգավիճակի տրամադրում, Մոսկվայի պատրիարքության ենթակայության ներքո գործող Ուկրաինայի ուղղափառ եկեղեցու իրավունքների ապահովում: Այս մասին հայտնում է Financial Times պարբերականը: Համաձայն հրապարակման, պլանը կազմվել է ռուսական կողմի հետ խորհրդակցությունների արդյունքում: Այն այս շաբաթ ԱՄՆ նախագահի հատուկ դեսպանորդ Սթիվ Վիթքոֆի կողմից փոխանցվել է Ուկրաինայի Ազգային անվտանգության եւ պաշտպանության խորհրդի քարտուղար Ռուստեմ Ումերովին՝ Մայամիում տեղի ունեցած հանդիպման ժամանակ: Բացի այդ, պլանը նախատեսում է ուկրաինական զինուժի թվի կրճատում 2 անգամ, Դոնբասից ուկրաինական իշխանությունների ամբողջական եւ լիակատար հրաժարում, Ուկրաինային ամերիկյան ռազմական օգնության կրճատում: Կիեւից, ըստ պարբերականի, հայտարարել են, որ առաջարկված պլանն առավելագույնս համապատասխանում է ռուսական պահանջներին, եւ նույնիսկ չարժե, որ քննարկվի, եթե դրանցում էական փոփոխություններ չարվեն:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Սկիզբը՝ էջ 7

լայն՝ Mayors for Economic Growth (M4EG) ծրագրի շրջանակում ապահովվել են փայտամշակման, կավագործության, կարուձեւի եւ նման աշխատարաններով: Երեխաներն աշխույժ ու ակտիվ՝ դեսպաններին պատմեցին, թե ինչ են կարում, նույնիսկ հավատացրին, թե կարելու համար ամենաբարդ հագուստը ժիլետն է, կավագործության խմբակում էլ իրենց աշխատանքները ցուցադրեցին, ու նորից M4EG ծրագրի ընթացքը ներկայացնողը նույն տղամարդն էր, որ ինձ թվացել էր՝ թանգարանի ղեկավարներից է: Պարզվեց՝ թանգարանի ղեկավարներից չէ, քաղաքի ղեկավարներից է. Կապանի փոխքաղաքապետն է՝ Գոռ Թադեւոսյան: Ահա թե ինչպիսի քաղաքային իշխանություն կարելի է ունենալ... Շատ ավելի կիրթ, զարգացած, իրազեկ, պատասխանատու, քան Երեւանի իշխանությունն է կամ երկրի: Դա էլ երրորդ վկայությունը, որ Կապանում մայրաքաղաքային աուրա է ու մակարդակ:

Վերջին միջոցառումը, որին մասնակցեցինք Կապանում՝ ԵՄ դեսպանների այցի շրջանակում, ժամանակակից սարքավորումներով գերհագեցած մի տպագրատան բացումն էր: Դրա ստեղծումը ֆինանսավորվել է ԵՄ-ի կողմից՝ նախկին դատապարտյալների «Ես փոխվում եմ» սոցիալական վերաինտեգրման ծրագրի ներքո: Իրականացնողը չեխական People in Need ՀԿ-ն է: Ազատազրկման վայրերից եկած կամ պրոբացիայի փուլում գտնվող անձանց զբաղվածության եւ վերաինտեգրման գաղափարը նախկին դատապարտյալների կողմից առաջ է մղել Արմենակը, որը լրագրող է, «Առավոտի» թղթակիցն է եղել, եւ շատերը, այդ թվում՝ ես, իրեն ճանաչում ենք «Առավոտից», անձամբ: Ուրախալի էր տեսնել, որ այդպիսի մարդասիրական, նաեւ՝ սոցիալական ռեզոնանս ունեցող ծրագրով է զբաղված:

Վերջապես, չեմ կարող հոդվածն ավարտել, առանց եւս մի համակրելի եւ կարեւոր պաշտոնյայի մասին նշելու՝ Նվարդ Հարությունյան: Նա Սյունիքի մարզպետի խորհրդականն է, զբաղվում է միջազգային ծրագրերով: Այցի երկու օրերի ընթացքում այդ կնոջ պատասխանատվությունը, ամեն ծրագրից տեղեկացվածությունը, սրտացավությունը, գործնականությունը, կերպարն իրոք տպավորեցին: Վստահաբար, նման պաշտոնյաների առկայությունը դեր է կատարում, որ այդքան երկրներ ու դեսպաններ աշխատեն Սյունիքում, եւ լավագույն այցեքարտն է, որ նոր երկրներ ու դեսպաններ էլ ցանկանան «Դիմակայուն Սյունիք թիմ Եվրոպա» ծրագրում ներգրավվել:

Ուկրաինայի հարցով հատուկ բանագնացը հեռանում է

ԱՄՆ նախագահի՝ Ուկրաինայի հարցով հատուկ բանագնաց Քիթ Քելոգը հունվարին կհեռանա Թրամփի վարչակազմից՝ հայտնում է Reuters լրատվական գործակալությունը: Պատճառն այն է, որ Քելոգի պաշտոնը ժամանակավոր է, եւ, համաձայն ամերիկյան օրենսդրության, նա կարող էր պաշտոնավարել 360 օր: Դրանից հետո արդեն, որպեսզի պաշտոնավարումը շարունակվի, պետք է դա հաստատվի Սենատի կողմից: Հրապարակման մեջ նշվում է նաեւ, որ Քելոգն ինքն էլ, ըստ նրա մերձավոր շրջապատի հավաստման, մտադրություն չի ունեցել սահմանված ժամկետից ավելի մնալ վարչակազմում: Հատկապես, որ Սպիտակ տանը ներկայում անհարկի շատ պաշտոնյաներ են զբաղված ռուս-ուկրաինական հակամարտության կարգավորման հարցերով: Բացի այդ, Քելոգի եւ ԱՄՆ նախագահի հատուկ դեսպանորդ Սթիվեն Վիթքոֆի տեսակետները երբեմն չեն համընկնում, քանի որ Վիթքոֆը հանդես է գալիս «ռուսամետ դիրքերից»: Թե ով է փոխարինելու Քելոգին այդ պաշտոնում, դեռ հայտնի չէ:

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 21.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:
Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am